ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«10» դեկտեմբերի 2021թ. № 1274-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀՀ ՊԵԿ նախագահի 30.07.2024թ. N940-Լ հրամանի խմբագրությամբ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ, ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԸՍՏ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎԻՆ ՎՃԱՐՎԱԾ ԵՎ ԿԱՆԽԱՎՃԱՐՎԱԾ) ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ, ՀԱՇՎԵՏՈՒ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N205-Ն որոշմամբ հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1321-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ, 5.1-րդ, 5.2-րդ, 5.4-րդ և 6-րդ կետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) եկամտային հարկի վերադարձի դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) եկամտային հարկի վերադարձի դիմումի ներկայացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի կողմից տրվող՝ հաշվետու ժամանակահատվածի համար ըստ վարկի մարման ժամանակացույցի վճարման ենթակա վարկառուի կողմից վճարված տոկոսների (բացառությամբ սուբսիդավորման հաշվին վճարված և կանխավճարված) գումարների մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) հաշվետու եռամսյակի ընթացքում հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների և դրանցից հաշվարկված ու Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հրամանի հավելված N3-ի 15-17-րդ կետերի: Սույն հրամանի հավելված N3-ի 15-17-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
10 դեկտեմբերի 2021թ. N1274 -Լ հրամանի

Ձև N 1

ՀԱՅՏ եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման	Փաստաթղթի հերթական համարը _____ *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*
Ֆիզիկական անձ վարկառուի անուն, ազգանուն, հայրանուն	
Հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար (ՀԾՀ)	
Անձը հաստատող փաստաթղթի սերիա և/կամ համար	
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	
ՀՀ-ում բնակության հասցե	
Ձեռք բերվող (կառուցվող) անշարժ գույքի հասցե	

* Ֆիզիկական անձ ժառանգի անուն, ազգանուն, հայրանուն	
Հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար (ՀԾՀ)	
Անձը հաստատող փաստաթղթի սերիա և/կամ համար	

Կոնտակտային տվյալներ	
Քաղաքային հեռախոս (Բջջային հեռախոս) +(374)00000000/	
Էլեկտրոնային փոստի հասցե	
Հայտի ներկայացման ամսաթիվ	

Խնդրում եմ հաստատել 20___ թվականի _____ ____ -ին N _____ _____ ____ վարկային պայմանագրով ստացված հիպոտեկային վարկի հաշվին ՀՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից ՀՀ տարածքում անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ ՀՀ տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացված և փաստացի բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելուն կամ անհատական բնակելի տուն կառուցելուն ուղղված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով վճարված եկամտային հարկի գումարների վերադարձից օգտվելու իրավունքը:

** Վարկառուի մահվան դեպքում, եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտը հարկային մարմին է ներկայացնում ժառանգը՝ վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարները ժառանգության զանգվածի մեջ ներառելու և այն ընդունելու դեպքում:*

Ֆիզիկական անձ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
10 դեկտեմբերի 2021 թ. N 1274 -Լ հրամանի

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման
վարչության թիվ XXX սպասարկման բաժին
Ձև N 2

ԴԻՄՈՒՄ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ										
Վարձու աշխատող վարկառուի անուն, ազգանուն, հայրանուն										
ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար										
Անհատ ձեռնարկատեր (նոտար) վարկառուի անուն, ազգանուն										
ՀՎՀՀ										
ՀՀ-ում բնակության հասցե										
Ձեռք բերվող (կառուցվող) անշարժ գույքի հասցե										

Կոնտակտային տվյալներ	
Քաղաքային հեռախոս (Բջջային հեռախոս) +(374)00000000/	
Էլեկտրոնային փոստի հասցե	

Խնդրում եմ 20___ թվականի _____ հաշվետու ժամանակահատվածում _____ ____ 20___թ. N _____ վարկային պայմանագրով ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար՝ ըստ վարկի մարման ժամանակացույցի վճարման ենթակա և վարկառուի կողմից վճարված տոկոսների՝ նշված գումարի չափով վերադարձնել վճարված եկամտային հարկի գումարները:

Բանկը, որին փոխանցվելու է վերադարձվող գումարը	
Վարկառուին պատկանող հաշվի համարը, որին փոխանցվելու է վերադարձվող գումարը	

Հ/Հ	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումները կատարած գործատուի, անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված վարձու աշխատողի		Հաշվարկված եկամտային հարկի մասով վճարված գումար (դրամ)
	ՀՎՀՀ	Անվանում (անուն, ազգանուն)	
1			
2			
3			
		ԸՆԴԱՄԵՆԸ	

V Համաձայնություն՝ ավել վերադարձված եկամտային հարկի գումարը տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա գումարից պակասեցնելու նպատակով

Հիպոտեկային վարկի վճարված տոկոսների գումար (դրամ)	
Վարկառուի կողմից մուտքագրվող վերադարձման ենթակա եկամտային հարկի գումար (դրամ)	
Հաշվարկված վերադարձվող գումար (դրամ)	
Փաստացի վերադարձվող գումար (դրամ)	

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
10 դեկտեմբերի 2021թ. N1274 -Լ հրամանի

ԿԱՐԳ
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով վարկառու վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի (վարկառուի մահվան դեպքում, վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարները ժառանգության զանգվածի մեջ ներառելու և այն ընդունելու դեպքում՝ ժառանգի) (այսուհետ՝ ֆիզիկական անձ) կողմից եկամտային հարկի վերադարձի մասին դիմումը (այսուհետ՝ Դիմում) հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար Դիմումը հարկային մարմին է ներկայացվում էլեկտրոնային եղանակով Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալ համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

3. Կետն ուժը կորցրել է 01.04.2022թ. թիվ 358-Լ հրամանով:

4. Առաջին անգամ եկամտային հարկի գումարների վերադարձման, ինչպես նաև առաջին անգամ եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով ֆիզիկական անձի կողմից հարկային մարմին թղթային եղանակով ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվության փոփոխությունների դեպքերում ֆիզիկական անձը Դիմումը ներկայացնում է եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտը հարկային մարմնի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում հաստատվելուց հետո: Ընդ որում.

1) եթե ֆիզիկական անձը հայտը ներկայացնելու պահին գրանցված չէ Համակարգում, ապա հայտը հաստատվելուց հետո հարկային մարմնի սպասարկման բաժնի աշխատակցի կողմից հայտի մեջ նշված էլեկտրոնային փոստին ուղարկվում է հղում՝ Համակարգ մուտք գործելու համար օգտվողի անունն ու գաղտնաբառը որոշելու նպատակով,

2) եթե հայտը ներկայացնելու պահին ֆիզիկական անձն արդեն իսկ գրանցված է Համակարգում, ապա հայտը հարկային մարմնի կողմից հաստատվելու դեպքում Համակարգի «Անձնական տվյալներ» բաժնում հարկային մարմնի սպասարկման բաժնի աշխատակցի կողմից համապատասխան տվյալները մուտքագրելուց հետո ֆիզիկական անձը հնարավորություն կունենա ներկայացնել Դիմում,

3) նույն վարկային պայմանագրի շրջանակներում մեկից ավելի վարկառու (համավարկառու) ֆիզիկական անձինք հայտերը կարող են ներկայացնել միասին՝ կցելով հարկային մարմին ներկայացվող համապատասխան փաստաթղթերի մեկ փաթեթ:

5. Կետն ուժը կորցրել է 30.07.2024թ. թիվ 940-Լ հրամանով:

6. Համակարգ մուտք գործելու համար ֆիզիկական անձը պետք է գրանցված լինի որպես Համակարգի օգտվող: Համակարգի օգտվող կարելի է գրանցվել կամ առցանց եղանակով, խիստ նույնականացում անցնելով, ինչպես նաև՝ լրացնելով և, էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելուց հետո, հարկային մարմին ներկայացնելով հարկային մարմնի պաշտոնական կայքի (www.src.am) «Ֆիզիկական անձ» բաժնի «Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալ (Անհատական հաշվի քաղվածքի տրամադրում)» ենթաբաժնում համապատասխան հղումով տեղադրված Անհատական հաշվին մուտքի հնարավորություն ստանալու հայտը, կամ այցելելով հարկային մարմնի ցանկացած սպասարկման բաժին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար (այսուհետ՝ ՀԾՀ) և էլեկտրոնային փոստի հասցե:

7. Դիմումը Համակարգի միջոցով լրացնելու և հարկային մարմին ներկայացնելու նպատակով ֆիզիկական անձը մուտք է գործում Համակարգի «Եկամտային հարկի վերադարձի դիմումների գրանցամատյան» էջը:

8. Դիմումի մեջ ինքնաշխատ լրացվում են վարձու աշխատող վարկառուի անունը, ազգանունը, ՀԾՀ-ն, անհատ ձեռնարկատեր (նոտար) վարկառուի անունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ), ձեռք բերվող (կառուցվող) անշարժ գույքի հասցեն:

9. Ֆիզիկական անձը Դիմումի մեջ ընտրում է եկամտային հարկի վերադարձի համապատասխան հաշվետու ժամանակահատվածը:

10. Դիմումի մեջ վարկային պայմանագրի համարը և ամսաթիվը լրացվում են ինքնաշխատ: Մեկից ավելի վարկային պայմանագրերի առկայության դեպքում ֆիզիկական անձը Դիմումի «Վարկային պայմանագրի համար» տողից ընտրում է համապատասխան պայմանագրի համարը, որից հետո ինքնաշխատ արտացոլվում է այդ վարկային պայմանագրի ամսաթիվը:

11. Դիմումի միջոցով ֆիզիկական անձը տրամադրում է իր համաձայնությունը՝ բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի միջոցով իր բանկային հաշվի համարի վավերականությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ կատարված հարցմամբ ստուգելու համար, որից հետո լրացնում է բանկի անվանումը և իրեն պատկանող բանկային հաշվի համարը, որին պետք է փոխանցվի եկամտային հարկի վերադարձվող գումարը:

12. Դիմումի մեջ ինքնաշխատ են արտացոլվում նաև՝

1) ֆիզիկական անձին աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ կատարած գործատուի, հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուի մոտ աշխատող վարձու աշխատողի և անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) ՀՎՀՀ-ն և անվանումը (անունը, ազգանունը).

2) հաշվարկված եկամտային հարկի մասով վճարված գումարը.

3) հիպոտեկային վարկի վճարված տոկոսների գումարը, որի համար վարկառուն հիպոտեկային վարկը տրամադրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությանը պետք է տրամադրի համաձայնություն.

4) փաստացի վերադարձվող գումարը, որն իրենից ներկայացնում է հաշվարկված վերադարձվող գումարի՝ հաշվետու ժամանակահատվածի համար հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարների հանրագումարի (իսկ «Վարկառուի կողմից մուտքագրվող վերադարձման ենթակա եկամտային հարկի գումար (դրամ)» տողում այլ գումար մուտքագրվելու դեպքում՝ այդ գումարի) և նույն վարկային պայմանագրի մասով նույն հաշվետու ժամանակահատվածի համար տվյալ ֆիզիկական անձին կամ այլ ֆիզիկական անձանց, ինչպես նաև տվյալ ֆիզիկական անձին այլ վարկային պայմանագրի (պայմանագրերի) մասով նույն հաշվետու ժամանակահատվածի համար վերադարձված, նախորդ հաշվետու ժամանակահատված(ներ)ի համար ավել վերադարձված (եթե ֆիզիկական անձը տրամադրել է իր համաձայնությունը և այդ գումարները վերադարձվելու են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե տվյալ ֆիզիկական անձի՝ հաջորդ հաշվետու ժամանակահատվածի և (կամ) նախորդ հաշվետու ժամանակահատված(ներ)ի համար եկամտային հարկի վերադարձի դիմում ներկայացված չլինելու դեպքում՝ նաև այդ ժամանակահատված(ներ)ի վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարներից) գումարների տարբերություն, և չի կարող գերազանցել օրենսդրությամբ սահմանված թույլատրելի չափը:

13. Այնուհետև ֆիզիկական անձը Դիմումի մեջ «Վարկառուի կողմից մուտքագրվող վերադարձման ենթակա եկամտային հարկի գումար (դրամ)» տողում ըստ անհրաժեշտության լրացնում է վերադարձման ենթակա եկամտային հարկի այն գումարի չափը, որը ցանկանում է հետ ստանալ (բայց ոչ ավելի, քան «Հաշվարկված վերադարձվող գումար (դրամ)» տողում հաշվարկված գումարի և նախորդ եռամսյակների համար ավել վերադարձված եկամտային հարկի գումարի տարբերությունը), և Դիմումը ներկայացնում է հարկային մարմին:

14. Համակարգի կողմից կատարվող անհրաժեշտ ստուգումների արդյունքում Դիմումը չի ընդունվում և մերժվում է, եթե՝

1) տվյալ վարկային պայմանագրի շրջանակում նույն հաշվետու ժամանակահատվածի համար դիմել է մեկ այլ ֆիզիկական անձ (վարկառուներից որևէ մեկը) և վերջինիս կողմից ներկայացված դիմումն ունի «Ընթացքում» կարգավիճակը.

2) հաշվետու ժամանակահատվածի համար ֆիզիկական անձը օգտվել է ուսման վարձի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից.

3) ֆիզիկական անձը չի տրամադրել իր բանկային հաշվի համարի ստուգման համաձայնությունը.

4) հարկային մարմնի տեղեկատվական համակարգում առկա չէ ֆիզիկական անձի եկամտային հարկի վերաբերյալ տեղեկատվություն.

5) չի կատարվել հաշվետու ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ եկամտային հարկի պարտավորությունը.

6) Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպության կողմից «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի միջոցով հաշվետու ժամանակահատվածի համար հիպոտեկային վարկի տոկոսների վճարման մասին տեղեկատվություն չի տրամադրվել.

7) դիմումը ներկայացնելու պահի դրությամբ առկա է ֆիզիկական անձին որևէ հիմքով նախորդ հաշվետու ժամանակահատված(ներ)ի համար ավել վերադարձված գումար, որի վերաբերյալ ֆիզիկական անձը ծանուցվել է, սակայն չի տրամադրել իր համաձայնությունը այդ գումարը հաջորդ հաշվետու ժամանակահատվածի և (կամ) նախորդ հաշվետու ժամանակահատված(ներ)ի համար եկամտային հարկի վերադարձի դիմում ներկայացված չլինելու դեպքում՝ նաև այդ ժամանակահատված(ներ)ի վերադարձման ենթակա եկամտային հարկի գումարներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնելու վերաբերյալ: Տվյալ դեպքում, ֆիզիկական անձը կարող է ներկայացնե)լ Դիմում ավել վերադարձված գումարը գանձվելուց հետո.

8) ներկայացվել է ոչ ճշգրիտ բանկային հաշվի համար:

15. Ֆիզիկական անձին որևէ հիմքով նախորդ հաշվետու ժամանակահատված(ներ)ի համար պակաս վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, Համակարգի կողմից յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 1-ին գեներացվում է ծանուցում, որով ֆիզիկական անձին տեղեկացվում է նոր Դիմում ներկայացնելու դեպքում այդ գումարների վերադարձման հնարավորության վերաբերյալ:

16. Ֆիզիկական անձին որևէ հիմքով նախորդ հաշվետու ժամանակահատված(ներ)ի համար ավել վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, Համակարգի կողմից յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 1-ին գեներացվում է ծանուցում՝ ֆիզիկական անձին առաջարկելով ավել վերադարձված եկամտային հարկի գումարը մինչև ծանուցումը ստանալու եռամսյակի ավարտը փոխանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարանի 900000000399

հաշվեհամարին՝ նշելով անուն, ազգանուն, ՀԾՀ և անձնագրային տվյալներ կամ առաջիկա եռամսյակի (նախորդ հաշվետու եռամսյակների համար եկամտային հարկի վերադարձի դիմում ներկայացված չլինելու դեպքում՝ նաև այդ եռամսյակների) համար եկամտային հարկի վերադարձի դիմում ներկայացնելու դեպքում տալ համաձայնություն ավել վերադարձված եկամտային հարկի գումարը տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա եկամտային հարկի գումարից պակասեցնելու մասին: Եթե մինչև ծանուցումը գեներացնելու եռամսյակին հաջորդող ամսվա 1-ը ֆիզիկական անձի կողմից տվյալ գումարը չի վերադարձվում (դիմումով վերադարձնելու կամ հաշվեհամարին փոխանցելու միջոցով), ապա համակարգի կողմից գեներացվում է ծանուցում, որով ֆիզիկական անձին տեղեկացվում է, որ 10-օրյա ժամկետում գումարը չվերադարձնելու դեպքում, օրենքով սահմանված կարգով կիրականացվի գումարի գանձում:

17. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունների կողմից նախորդ հաշվետու ժամանակահատված(ներ)ի համար ճշգրտված տվյալներ ներկայացվելու դեպքում Համակարգի կողմից ծանուցումներն ուղարկվում են տվյալ հիպոտեկային վարկային պայմանագրի կողմ հանդիսացող ճշգրտված հաշվետու ժամանակաշրջանի համար դիմում ներկայացրած բոլոր ֆիզիկական անձանց, իսկ ավել վերադարձված գումարը պակասեցվում է ծանուցումը ստանալուց հետո առաջինը եկամտային հարկի վերադարձի դիմում ներկայացրած ֆիզիկական անձ(անց)ից:

Ձև N3

ՈՒԺը կորցրել է 01.04.2022թ. թիվ 358-Լ հրամանով:

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
10 դեկտեմբերի 2021թ. N1274 -Լ հրամանի

ՁԵՎ N4

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հաշվետու ժամանակահատվածի համար ըստ վարկի մարման ժամանակացույցի վճարման ենթակա վարկառուի կողմից վճարված տոկոսների (բացառությամբ սուբսիդավորման հաշվին վճարված և կանխավճարված) գումարների մասին

Փաստաթղթի հերթական համարը

Վարկային պայմանագրի	Համարը	Ամսաթիվը

Վարկառու	անուն, ազգանուն	հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար	հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)
Համավարկառու	անուն, ազգանուն	հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համար	հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)
Հաշետու ժամանակահատված	տարի		եռամսյակ
Հաշվետու ժամանակահատվածի համար ըստ վարկի մարման ժամանակացույցի վճարման ենթակա տոկոսների գումար (դրամ)	ամիս		
Հաշվետու ժամանակահատվածի համար ըստ վարկի մարման ժամանակացույցի տոկոսների վճարման ամսաթիվ	ամիս		
Հաշվետու ժամանակահատվածի համար ըստ վարկի մարման ժամանակացույցի վճարման ենթակա վճարված տոկոսների (բացառությամբ սուբսիդավորման հաշվին վճարված և կանխավճարված) գումար (դրամ)	ամիս		
Եռամսյակի համար վճարված տոկոսագումար			

Հավելված N 5
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
10 դեկտեմբերի 2021թ. N1274 -Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՇՎԵՏՈՒ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են վարձու աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում՝ հաշվետու եռամսյակի ընթացքում հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների և դրանցից հաշվարկված ու Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Վարձու աշխատողի համար գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում՝ հաշվետու եռամսյակի ընթացքում հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների և դրանցից հաշվարկված ու Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկատվությունը (նախկինում տրամադրված տեղեկատվության փոփոխության դեպքում՝ ճշգրտված տեղեկատվությունը) հարկային մարմին է ներկայացնում գործատուն՝ էլեկտրոնային եղանակով՝ համապատասխան պետական մարմիններին համակարգում տեղեկություններ մուտքագրելու հասանելիություն տրամադրելու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ եկամտային հարկի վերաբերյալ տեղեկատվությունը կից գրությամբ փակ ծրարով ներկայացվում է ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչություն (հասցե՝ ք.Երևան, Խորենացի 3) կամ ուղարկվում է հարկային մարմնի հետ համաձայնեցված էլեկտրոնային փոստին:

3. Սույն կարգով սահմանված տեղեկատվությունը ներկայացվում է՝ համաձայն Ձև N 5-ի:

Ձև N 5

Հ/Հ	Ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ)	Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը	Ֆիզիկական անձի անձնագրի սերիան, համարը	Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկման հաշվետու տարի	Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկման հաշվետու եռամսյակ	Հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների գումար (դրամ)	Հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումար (դրամ)	Ճշգրտված տեղեկատվության տրամադրման դեպքում կատարվում է համապատասխան նշում